



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16068 գործարքներ, որոնց քանակը 2006թ. դեկտեմբերի համեմատ աճել է 29.6%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ՝ 7.3%-ով:

2007թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5957 օտարման գործարքների 87.1% կազմել են առուվաճառքները, 12.0%՝ նվիրատվությունները և 0.9%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.0%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.7% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2007թ. դեկտեմբերին, 2007թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 2.5%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ՝ 6.6%-ով:

2007թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 56.1% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 10.2%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 13.6%-ով:

2007թ. դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2006թ.	դեկտեմբեր 2007թ.	նոյեմբեր 2007թ.
Կենտրոն	403700	474100	473100
Արաբկիր	323300	378400	377500
Քանաքեռ-Զեյթուն	223800	297800	295000
Նոր-Նորք	194500	253900	251300
Ավան	181400	255700	250800
Էրեբունի	197900	254800	250500
Շենգավիթ	206300	264000	261700
Դավթաշեն	216500	276900	274600
Աջափնյակ	192800	260100	257100
Մալաթիա-Սեբաստիա	182800	254700	250000
Նուբարաշեն	117600	138400	137500
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>221900</b>	<b>282600</b>	<b>279900</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. դեկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. նոյեմբերի համեմատ աճել են 1.0%-ով:

2007թ. դեկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 552 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. նոյեմբերի համեմատ աճել է 4.9%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 0.5%-ով:

2007թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2006թ.	դեկտեմբեր 2007թ.	նոյեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	84000	112300	111200
	Ապարան	28000	30900	30800

	Թային	30000	40400	40300
Արարատ	Արտաշատ	66000	90300	89900
	Մասիս	77000	116300	112400
	Վեդի	52000	74200	71300
	Արարատ	51000	58200	57900
Արմավիր	Վաղարշապատ	106000	149500	142900
	Արմավիր	74000	109200	108700
	Մեծամոր	48000	69300	66300
Գեղարքունիք	Մևան	49000	76600	73300
	Գավառ	31000	41000	39400
	Մարտունի	44000	61300	59000
	Վարդենիս	25000	29200	28300
	Ճամբարակ	13900	15600	15500
Լոռի	Վանաձոր	62000	81400	77800
	Ստեփանավան	30000	43400	42000
	Սպիտակ	40300	57200	55000
	Ալավերդի	23300	27800	27600
	Տաշիր	22000	29000	28900
	Թումանյան	5400	5500	5500
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	10900	12700	12600
Կոտայք	Աբովյան	122000	156400	151600
	Նոր Հաճն	83000	113700	111800
	Բյուրեղավան	60000	84900	82200
	Եղվարդ	76000	106000	105700
	Հրազդան	43000	59600	58000
	Ծաղկաձոր	80600	114000	110000
	Չարենցավան	52000	74500	71800
Շիրակ	Գյումրի	59000	84300	81800
	Արթիկ	39000	48900	48600
	Մարալիկ	23800	25900	25800
Սյունիք	Գորիս	59000	85500	82500
	Կապան	56000	75500	72600
	Սիսիան	47400	60300	57900
	Մեղրի	35300	44000	42800
	Ագարակ	23000	27600	27500
	Քաջարան	29700	40600	39000
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	51600	69300	69200
	Եղեգնաձոր	63400	88800	87300
	Ջերմուկ	92000	115000	114900
Տավուշ	Դիլիջան	58000	79000	75900
	Իջևան	74000	105800	101900
	Բերդ	33000	37300	36200
	Նոյեմբերյան	26000	29100	29000
	Այրում	18000	21000	21000

2007թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. նոյեմբերի համեմատ աճել են 2.5%-ով:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 680 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 200, մյուս մարզերում միասին վերցրած՝ 480: 2007թ. նոյեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 2.6%-ով, ընդ որում

Երևանում՝ 20.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 3.4%-ով: 2006թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 28.3%-ով, ընդ որում Երևանում՝ 85.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 13.7%-ով:

2007թ. դեկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2006թ.	դեկտեմբեր 2007թ.	նոյեմբեր 2007թ.
Կենտրոն	406600	480100	476700
Արաբկիր	327500	391100	391000
Քանաքեռ-Զեյթուն	226900	302800	297500
Նորք-Մարաշ	197900	251800	248100
Ավան	185400	262000	254000
Էրեբունի	200600	258200	252900
Շենգավիթ	208400	267200	264400
Դավթաշեն	218700	282600	279100
Աջափնյակ	195900	264700	262100
Մալաթիա-Մեքաստիա	185400	259600	254600
Նուբարաշեն	119600	141700	138700
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>224800</b>	<b>287400</b>	<b>283600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. դեկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. նոյեմբերի համեմատ աճել են 1.3 %-ով:

2007թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2006թ.	դեկտեմբեր 2007թ.	նոյեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	85300	116600	116300
	Ապարան	29000	34000	33700
	Թալին	31200	43200	43100
Արարատ	Արտաշատ	67500	96400	95600
	Մասիս	78400	119400	115000
	Վեդի	53200	76300	73000
	Արարատ	52500	63400	63100
Արմավիր	Վաղարշապատ	107100	151800	145100
	Արմավիր	75200	112800	110800
Գեղարքունիք	Սևան	50200	78400	74800

	Գավառ	32300	42800	40900
	Մարտունի	45300	63400	60600
	Վարդենիս	26800	31200	30800
	Ճամբարակ	15200	19000	18800
Լոռի	Վանաձոր	63400	85500	84500
	Ստեփանավան	31500	46900	46400
	Սյիտակ	41800	59200	56900
	Ալավերդի	24800	30200	30200
	Տաշիր	23300	31100	30200
	Թումանյան	7300	8900	8700
	Շամլուղ	4600	6000	5800
	Ախթալա	12600	15100	15100
Կոտայք	Արովյան	123300	160900	158700
	Նոր Հաճն	84300	118200	116600
	Բյուրեղավան	61100	86900	83700
	Եղվարդ	77100	110900	108100
	Հրազդան	44200	63100	61300
	Ծաղկաձոր	86600	181400	171700
	Չարենցավան	53200	76500	73500
Շիրակ	Գյումրի	60500	89800	87200
	Արթիկ	40300	51400	51000
	Մարալիկ	25300	29200	29000
Սյունիք	Գորիս	60300	87800	84600
	Կապան	57600	78600	76300
	Սիսիան	49000	62700	60700
	Մեղրի	36700	46700	45100
	Ագարակ	24100	29500	28800
	Դաստակերտ	9000	9900	9800
Վայոց Ձոր	Վայք	53200	72000	70600
	Եղեգնաձոր	65200	92800	89700
	Ջերմուկ	41600	66000	64000
Տավուշ	Դիլիջան	59100	83400	80800
	Իջևան	75100	107700	103900
	Բերդ	34100	39200	38900
	Նոյեմբերյան	27200	34600	34600
	Այրում	19200	22800	22800

2007թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. նոյեմբերի համեմատ աճել են 2.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2007թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 2370 միավոր /1674.43 հա/ հողեր, որից Երևանում՝ 202 միավոր /28.79 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 99 միավոր /14.66 հա/ հողեր, որից Երևանում՝ 63 միավոր /10.09 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1134 միավոր /1523.23 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /3.70 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 707 միավոր /63.99 հա/, որից Երևանում՝ 118 միավոր /8.63 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 458 միավոր /42.31 հա/, որից Երևանում՝ 73 միավոր /16.26 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 37 միավոր /15.91 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.20 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 31 միավոր /28.63 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 3 միավոր /0.36 հա/:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 2243 միավորի /1600.09 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 186 միավոր /26.55 հա/, նվիրատվության գործարքներ՝ 120 միավորի /72.33 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /2.04 հա/ և փոխանակության գործարքներ՝ 7 միավորի /2.01 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.20 հա/:

Հանրապետությունում 2007թ. դեկտեմբերին, 2006թ. դեկտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 4.0%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել՝ 2.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 25.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 439.45 հա, որից 428.71 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 39.9% կամ 895 գործարքներ /868.03 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 49 գործարքներ /7.75 հա/, իսկ 59.3% կամ 1329 միավորը /724.12 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 129 միավոր /18.75 հա/:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 19 գործարք /7.94 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2007թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՄՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.20	22	2.39	26	5.16	10	3.70	0	0.00	83	5.30	36	9.74
Արագածոտն	39	66.91	0	0.00	1	0.18	18	1.69	68	47.17	0	0.00	68	6.53	6	0.43
Արարատ	59	93.10	1	0.01	26	2.45	74	2.18	103	45.49	3	11.12	71	6.66	4	0.55
Արմավիր	49	147.45	6	0.60	5	0.33	52	1.14	144	281.26	4	0.36	111	8.26	6	0.05
Գեղարքունիք	23	57.02	1	0.20	7	1.05	23	5.56	35	32.17	1	0.004	12	1.43	6	0.60
Լոռի	9	8.25	1	0.20	1	0.10	20	0.32	36	15.35	0	0.00	10	0.97	6	0.04
Կոտայք	150	249.03	1	0.86	26	2.46	46	5.36	152	74.78	0	0.00	139	14.93	14	1.30
Շիրակ	7	5.49	13	1.67	23	0.66	23	1.36	32	35.84	1	0.002	9	0.80	4	0.27

Մյունիք	4	23.65	1	0.16	2	0.17	32	0.26	45	35.73	0	0.00	10	0.87	2	0.03
Վայոց Ձոր	40	104.52	1	0.10	0	0.00	15	0.14	8	2.50	0	0.00	0	0.00	4	0.58
Տավուշ	9	71.10	0	0.00	16	2.07	18	0.44	50	55.89	0	0.00	11	0.99	2	3.30
Ընդամենը	389	826.52	26	4.00	129	11.86	347	23.61	683	629.88	9	11.49	524	46.74	90	16.89

Ստորև ներկայացվում է 2007թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	32	5.93	1	0.20	8	0.80	23	4.93	17	1.82	0	0.00	0	0.00	14	1.59	3	0.23
Արագածոտն	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	56	68.76	39	66.91	0	0.00	1	0.18	16	1.67
Արարատ	16	0.05	0	0.00	0	0.00	16	0.05	144	97.67	59	93.10	1	0.001	26	2.45	58	2.12
Արմավիր	11	0.64	1	0.26	4	0.27	6	0.11	100	148.78	48	147.35	5	0.34	1	0.06	46	1.03
Գեղարքունիք	4	0.14	0	0.00	0	0.00	4	0.14	50	63.69	23	57.02	1	0.20	7	1.05	19	5.42
Լոռի	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	30	8.87	9	8.25	1	0.20	1	0.10	19	0.32
Կոտայք	13	1.78	1	0.86	0	0.00	12	0.92	208	255.73	148	248.83	0	0.00	26	2.46	34	4.44
Շիրակ	7	0.24	1	0.11	2	0.04	4	0.09	59	8.94	7	5.49	12	1.56	21	0.62	19	1.27
Մյունիք	1	0.12	0	0.00	1	0.12	0	0.00	38	24.12	4	23.65	1	0.16	1	0.05	32	0.26
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	56	104.76	40	104.52	1	0.10	0	0.00	15	0.14
Տավուշ	7	0.26	0	0.00	3	0.21	4	0.05	36	73.35	9	71.10	0	0.00	13	1.86	14	0.39
Ընդամենը	94	9.17	4	1.43	18	1.44	72	6.30	794	856.49	386	826.22	22	2.56	111	10.42	275	17.29

Հանրապետությունում 2007թ. դեկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք /0.30 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. դեկտեմբերին 2006թ. դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 8.9%-ով: Ընդ որում Երևանում աճել է 2.4 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 10.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 5.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել՝ 51.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 5.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 2.4 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. դեկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	28	54.47	41.3	290.7	165.0	51	30.68	362.2	6772.5	2952.6
Ապարան	2	1.47	86.1	1036.3	561.2	10	9.61	90.6	767.6	394.8
Թալին	9	10.97	34.8	126.3	46.3	4	4.48	90.6	758.5	417.9
Ծաղկահովիտ						2	2.02	77.0	948.2	183.4
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	34	52.95	29.8	2333.9	1010.8	40	15.73	335.1	5418.0	1552.4
Մասիս	7	16.06	60.3	1146.3	301.1	19	10.37	181.1	6772.5	1985.8
Վեդի	18	24.09	20.0	1540.0	344.4	39	17.16	203.8	4515.0	1360.7
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	16	19.89	409.5	2352.0	1586.7	43	49.00	294.3	4063.5	1002.4
Բաղրամյան	17	107.68	33.8	603.6	141.5	33	207.42	90.6	677.3	617.5
Վաղարշապատ	15	19.78	33.1	841.6	517.3	63	22.31	443.7	9030.0	1735.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						11	9.02	190.2	496.7	390.0
Ճամբարակ	3	0.92	441.0	750.0	593.7	11	8.51	45.3	541.8	161.2
Մարտունի						1	0.18	45.3	1806.0	480.0
Սևան	15	40.31	116.5	1760.0	476.2	2	2.45	45.3	451.5	207.5
Վարդենիս	5	15.79	187.0	636.4	423.5	10	12.01	27.2	532.8	266.7
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի	3	3.75	377.7	3883.3	2465.0	19	7.25	163.0	2483.3	1140.3
Գուգարք						3	1.90	226.4	2709.0	970.2
Սպիտակ	1	0.10	710.0	710.0	710.0	4	0.90	226.4	1490.0	535.3
Ստեփանավան	5	4.40	25.7	81.0	38.1	3	1.57	90.6	2257.5	390.6
Տաշիր						6	2.73	45.3	451.5	217.1
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	39	111.34	24.8	807.9	210.9	83	24.97	271.7	11287.5	3647.4
Եղվարդ	72	107.72	35.0	1370.0	236.6	55	35.38	172.1	11287.5	2566.8
Հրազդան	37	29.76	41.1	667.5	409.5	13	11.16	113.2	2709.0	1016.7
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						14	10.93	249.0	1693.1	470.6
Ամասիա						1	2.73	36.2	237.0	120.0
Անի						17	22.18	108.7	361.2	260.1
Աշոցք								45.3	165.0	118.5
Արթիկ	7	5.49	47.3	355.8	170.9			63.4	1083.6	180.8
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						7	9.71	90.6	673.3	354.7
Կապան	1	23.00	18.4	18.4	18.4			54.3	841.6	234.2
Մեղրի						36	20.92	181.1	1784.2	515.3
Սիսիան	3	0.65	514.3	550.0	529.8	2	5.10	45.3	631.2	246.2
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	12	8.96	37.3	552.0	204.1	8	2.50	117.7	2524.8	1326.9
Վայք	28	95.56	44.7	236.5	141.9			54.3	1430.7	521.3
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ	5	70.11	217.1	364.6	246.6	23	41.46	45.3	841.6	372.8
Իջևան	2	0.44	2970.0	5857.7	4413.8	5	2.26	240.0	1683.2	838.8
Նոյեմբերյան	2	0.56	703.3	1298.0	1000.7	18	11.70	45.3	3509.5	561.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:



Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. դեկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	1	1770.0	175.7	175.7	175.7	63	59699.0	113.2	3612.0	2387.4
Ապարան						3	2930.0	113.2	632.1	206.8
Թալին						1	1350.0	45.3	361.2	101.2
Ծաղկահովիտ						1	1280.0	45.3	361.2	69.8
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	17	17440.0	145.0	413.3	229.2	18	21090.0	135.8	2709.0	910.2
Մասիս	8	6423.0	659.0	1608.9	1217.5	35	27910.0	135.8	9030.0	1192.3
Վեդի	1	600.0	671.7	671.7	671.7	16	15990.0	113.2	993.3	660.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						23	18017.0	135.8	2257.5	1153.0
Բաղրամյան						5	6190.0	81.5	270.9	141.0
Վաղարշապատ	1	560.0	3828.0	3828.0	3828.0	83	58354.0	135.8	4515.0	1516.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	1	1000.0	115.0	115.0	115.0			135.8	903.0	362.6
Ճամբարակ								45.3	135.5	99.8
Մարտունի	2	840.0	113.2	113.2	113.2	11	11830.0	90.6	451.5	254.2
Սևան	4	8700.0	188.1	188.1	188.1	1	2460.0	90.6	903.0	160.9
Վարդենիս								45.3	225.8	115.8
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						1	1039.0	67.9	270.9	133.7
Գուգարք						5	3835.0	67.9	2347.8	570.0
Սպիտակ						1	1990.0	63.4	451.5	130.0
Ստեփանավան	1	1000.0	115.0	115.0	115.0	3	2860.0	45.3	270.9	109.9
Տաշիր								45.3	135.5	68.1
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	21	20262.0	410.0	2305.0	786.9	49	47212.0	135.8	6772.5	1870.1
Եղվարդ	3	2800.0	1650.0	1690.5	1677.0	76	87756.0	135.8	6772.5	1990.3
Հրազդան	2	1500.0	388.0	636.0	512.0	12	12240.0	135.8	9030.0	1297.1
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	18	4939.0	277.2	3516.5	1964.5	6	3355.0	113.2	1535.1	330.8
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						1	1220.0	67.9	180.6	98.6
Աշոցք								40.8	135.5	58.1
Արթիկ	3	1260.0	265.1	479.2	336.5	2	3400.0	67.9	925.6	170.3
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								67.9	541.8	238.2
Կապան						2	1286.0	67.9	632.1	206.3
Մեղրի	1	470.0	325.5	325.5	325.5	6	5090.0	67.9	406.4	123.2
Միսիան						2	2350.0	67.9	406.4	141.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր								67.9	1128.8	301.2

Վայր								77.0	632.1	120.1
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	85.8
Իջևան	13	18584.0	1366.5	1495.0	1434.5	9	7650.0	67.9	1354.5	429.5
Նոյեմբերյան						2	2210.0	45.3	632.1	136.7

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք /2.20 հա մակերեսով/ Շիրակի մարզում:

2007թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1247 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.8%: Ընդ որում, վարձակալության գործարքների 30.2% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. դեկտեմբերին 2007թ. նոյեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 30.4%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ՝ 70.6%-ով:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 76 բնակարանների, 27 անհատական բնակելի տների, 358 հասարակական, 36 արտադրական նշանակության օբյեկտների, 736 միավոր /3817.49 հա/ հողերի և 14 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 47 վարձակալության գործարքների /այդ թվում 17 միավոր /0.06 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. նոյեմբերի համեմատ նվազել է 36.5%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ աճել՝ 9.3%-ով:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 3817.49 հա հողերից 5.19 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3812.30 հա հողերի 6.58 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.40 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 2427.75 հա, որից 2426.21 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 216.39 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. դեկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ. հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ. հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	2	175.41	10	46.63
Արարատ	1	21.23	11	78.86
Արմավիր	0	0.00	1	0.05
Գեղարքունիք	2	9.60	57	108.80
Լոռի	2	7.70	35	84.87
Կոտայք	0	0.00	27	52.56

Շիրակ	0	0.00	329	615.36
Սյունիք	0	0.00	11	2426.21
Վայոց Ձոր	2	2.45	10	25.52
Տավուշ	0	0.00	2	1.25
<b>Ընդամենը</b>	<b>9</b>	<b>216.39</b>	<b>493</b>	<b>3440.11</b>

2007թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2818 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 17.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. նոյեմբերի համեմատ աճել է 25.3%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ՝ 70.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.4%/, առանձնատների /26.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.7%/ և հողերի /14.7%/ նկատմամբ: 2007թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1032 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. նոյեմբերի համեմատ աճել է 10.8%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ՝ 47.4%-ով:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 457.26 հա հողեր, որից 3.66 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 97.7% կամ 446.80 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.51 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 137.26 հա, որից 134.48 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 15 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. նոյեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 2.2 անգամ, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ՝ 37.5%-ով: 2007թ. դեկտեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 8-ը՝ Երևանում, 4-ական՝ Արարատի, Կոտայքի, 2-ական՝ Սյունիքի, Վայոց Ձորի և 1-ական՝ Գեղարքունիքի, Տավուշի մարզերում:

2007թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2532 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. նոյեմբերի համեմատ աճել է 1.3%-ով, իսկ 2006թ. դեկտեմբերի համեմատ՝ 28.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.1%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***